



## ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋՆԹԱՑԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԻ

Անցած մեկ տարվա ընթացքում ոլորտում իրականացված խորը վերլուծությունների հիման վրա մշակված բարեփոխումներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ կառավարության հնգամյա ծրագրում:

Նպատակ ունենալով երկարացնել բնակչության առողջ կյանքի տևողությունը՝ շեշտադրումը դրվել է բժշկական ծառայությունների որակի բարձրացման և ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխումների վրա՝ հիմքում ունենալով արդարության սկզբունքի և մատչելիության ապահովումը: Առաջնահերթ ծրագրերի թվում են նաև ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, վաղ հայտնաբերումն ու վերահսկումը, առողջ ապրելակերպի ներդրումն ու ծխախոտի դեմ պայքարը:

Ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման և մատուցվող բժշկական օգնության որակի բարելավման նպատակով իրականացված մի շարք ենթածրագրերի արդյունքում հոկտեմբերի 1-ից սոցիալական փաթեթի գրեթե 100000 շահառուի բժշկական օգնությունը կազմակերպվում է ապահովագրության միջոցով: Այդ նպատակով սոցիալական փաթեթի շահառուների համար ձեռք են բերվել առողջության ապահովագրության պայմանագրեր:

Բժշկական ծառայությունների որակի բարձրացմանը մեծապես կնպաստի կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրումը: Արդեն տեղայնացվել է 117 կլինիկական ուղեցույց, մշակվել 64 գործելակարգ և 28 ընթացակարգ:

Ներդրվել է էլեկտրոնային առողջապահական համակարգը, որը նաև այցելուին տրամադրված ծառայությունների և դրանց որակի նկատմամբ բնակչության կողմից վերահսկման և գնահատման գործիք է: Առաջիկայում այն մասնագետի մոտ առցանց հերթագրվելու և բժշկի աշխատանքը գնահատելու հնարավորություն կընձեռի:

Պացիենտ-բժշկական կազմակերպություններ փոխհարաբերություններում ծագող վեճերի լուծման համար մշակվել է «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ:

Համակարգում սկսված օպտիմալացումը հիմնականում կրկնվող գործառույթների կրճատման և հիվանդանոցների ու մասնագետների ծանրաբեռնվածության ապահովման նպատակ ունի: Այս տրամաբանությամբ նախարարության ենթակայության 4 կազմակերպություն լուծարվել է, որից երկուսը միավորման՝ երկուսը լուծարման և գործառույթների՝ այլ կազմակերպությունների միջև բաշխման ճանապարհով: ՀՀ ԱՆ «Նորք» հոգեկան առողջության կենտրոնի և «Նուբարաշեն» հոգեբուժական կլինիկայի միավորման արդյունքում ազատված 300 մլն դրամը ներդրվում է ծառայության զարգացմանը, բուժանձնակազմի շարունակական վերապատրաստման և վարձատրության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Դրանից 100 միլիոնը կուղղվի հեմոդիալիզի ծրագրում առկա դեֆիցիտի փակմանը:

2017 թվականից առաջին անգամ ձեռնարկվել է պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատությունների կողմից դեղերի և որոշ բժշկական ապրանքների գնումների կենտրոնացման գործընթացը՝ առավել արդյունավետ և արհեստավարժ գործիքների

կիրառման, մեծածավալ գնումների հաշվին պետական միջոցներ տնտեսելու նպատակով: Նախարարության ենթակայության որոշ կազմակերպությունների լաբորատոր պարագաների կենտրոնացված գնումների արդյունքում արձանագրվել է 25% տոկոսի տնտեսում:

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ներդրված ռազմավարական ծրագրերի և միջոցառումների շնորհիվ մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշը նվազել է շուրջ 22%-ով (2017թ. 8 ամսվա ընթացքում հանրապետության ծննդատներում արձանագրվել է մայրական մահացության 2 դեպք (2016թ. 8 ամսում՝ 7): Արձանագրվել է մանկական (0-1տ.) մահացության ցուցանիշի նվազում շուրջ 1/4-ով: Իրականացված նորածնային սկրինինգ ծրագրերի ներդրման շնորհիվ հայտնաբերվել է բնածին ծանր ախտաբանությամբ տառապող շուրջ 750 նորածին, որոնց մոտ կանխվել է հիվանդությունների հետագա զարգացումը, հետևաբար՝ հաշմանդամությունը և մահվան հնարավոր ելքը:

Վերջին տասնամյակում ավելի քան 2 անգամ կրճատվել է սակավարյունության տարածվածությունը կանանց և երեխաների շրջանում (մինչև 5տ. երեխաների մոտ այն կազմել է 17%, 2005 թվականի 37%-ի համեմատ):

ՀՀ ԱՆ արդիականացված Արյունաբանական կենտրոնում ընթացիկ տարում հաջողությամբ իրականացվել է ցողունային բջիջների 4 փոխպատվաստում: Կենտրոնը նախադրյալներ ունի նպաստելու բժշկական տուրիզմի զարգացմանը:

Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության բարելավման նպատակով Տավուշի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի շուրջ 351 հազար բնակչության սպասարկման համար տրամադրվել է բարձր անցանելիության, ժամանակակից սարքավորումներով և պարագաներով համալրված շտապ բժշկական օգնության 10 ավտոմեքենա:

2017թ. իրականացվել են մի շարք բժշկական թիրախային ծրագրեր: Դրանց թվում է Վրաստանի կառավարության օժանդակությամբ վիրուսային հեպատիտ Յ հիվանդությամբ տառապող շուրջ 1000 հիվանդի անվճար բուժումը ժամանակակից, ամենաարդյունավետ Սովալդի դեղով:

Կուրության կանխարգելման նպատակով Երևանում և մարզերում տեղակայված 8 բժշկական կազմակերպությունում անվճար իրականացվում են 3000 շահառուի կատարակտի վիրահատություններ՝ ներառյալ ոսպնյակի արժեքը:

Աշխատանքներ են տարվում Պալիատիվ բժշկական օգնության ծառայությունների ռազմավարության գործնական ներդրման, մարզային հիվանդանոցների կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային միջոցներով տուբերկուլոզի դեմ պայքարի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրերին աջակցության եռամյա (2016-2018թթ.) ծրագրերը: Դրանց շրջանակում մարզային լաբորատորիաները հագեցվել են տուբերկուլոզի արագ, PCR մեթոդով ախտորոշման սարքերով, ձեռք են բերվել դեղեր, միգրանտներին և ազատազրկված անձանց տրամադրվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն: Շարունակվում է մեթադոնային փոխարինող բուժումը Երևանի, Լոռու, Շիրակի և Սյունիքի

մարզերի նարկոլոգիական կլինիկաներում և քրեակատարողական համակարգում (ավելի քան 500 շահառու):

1200-ից ավելի ՄԻԱՎ վարակ ունեցող անձի տրամադրվում է հակառետրովիրուսային անվճար բուժում՝ տալով նրանց լիարժեք կյանքով ապրելու, աշխատելու և իրենց ընտանիքների մասին հոգալու հնարավորություն:

2016թ. ԱՀԿ-ի Գլոբալ վալիդացիոն հանձնաժողովը վավերացրել է Հայաստանում մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման վերացումը: Իսկ 2017թ. ՄԱԿ-ի պետական ծառայության մրցույթում ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կենտրոնն առաջին տեղն զբաղեցնելով արժանացել է գավաթի և հավաստագրի պետական ծառայության տրամադրման գործում նորարարության և գերազանց որակի միջոցով Կայուն զարգացման 2030թ. Օրակարգի իրականացմանն աջակցելու համար:

Նախաքաղցկեղային և քաղցկեղային վիճակների նվազեցման նպատակով նախատեսվում է 13 տարեկան աղջիկների շրջանում մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստման ներդրում: ՄՊՎ-ի դեմ պատվաստումներ իրականացնող 71 երկրի փորձը վստահեցնում է, որ պատվաստումն անվտանգ է և արդյունավետ: Նախարարության կայքում կարելի է գտնել թեմային առնչվող բազմաթիվ հարցերի պատասխաններ (<http://moh.am/#1/748>):

Մարզային առողջապահական համակարգի արդիականացման ծրագրով Վանաձորի ԲԿ-ն բժշկական և ախտորոշիչ սարքավորումներով, անհրաժեշտ կահույքով և պարագաներով հագեցնելու նպատակով արդեն կնքվել են պայմանագրեր: Ընթացքում է կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի համար անհրաժեշտ սարքերի և կահույքի ձեռք բերումը: Սևանի ԲԿ-ի նոր շենքի կառուցման և Արտաշատի ԲԿ-ի վերակառուցման աշխատանքներն ընթանում են ժամանակացույցին համապատասխան:

Տարին արդյունավետ է եղել միջազգային համագործակցության զարգացման առումով: Չեխիայի, Վրաստանի, Չինաստանի, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների ու միջազգային մի շարք կառույցների հետ ծավալվում է նպատակային փոխգործակցություն: Օրեր առաջ Երևանում կայացած Հայ-ռուսական առողջապահական երրորդ համաժողովում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող համագործակցության բազմաթիվ հարցեր:

Մշակվել են «Դեղերի մասին» ՀՀ օրենքից բխող ՀՀ կառավարության 13 որոշման և նախարարի 7 հրամանի նախագծեր, որոնք համաձայնեցվել են նաև Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատված դեղերի շրջանառությանն առնչվող որոշումների հետ:

Շարունակվում են աշխարհում մեծ հեղինակություն ունեցող «Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային (PIC/S)» անդամակցության և պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) ներդրման գործընթացները:

Դեղերի անվտանգ և արդյունավետ կիրառումը խթանելու նպատակով իրականացվել են հակամանրէային դեղերի նշանակումների ուսումնասիրություններ հիվանդանոցներում: